ԸՆՏԱՆԵԿԱՆ, ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ ՀԱՄԱՐ ՏԻԿՆԻԿՆԵՐ

Երեխայի հետ զբաղվողին

5-6 տարեկան երեխայի կյանքում թատրոնի, մասնավորապես՝ տիկնիկային թատրոնի դերը դժվար է գերագնահատել: Տիկնիկներով խաղալը, դրանց կերպարի մեջ մտնելը երեխային խոսեցնելու, մտածել տալու, ստեղծագործելու հաճույքն ապրեցնելու հեշտ և արդյունավետ ճանապարհ է:

Տիկնիկային թատրոնի համար պատրաստի մշակված խաղալիքներ, ձևա-վորումներ, շիրմաներ և այլ նյութեր, իհարկե, կարելի է խանութներից, տարբեր կազմակերպություններից ձեռք բերել: Դրանց մասին տեղեկություններ կարելի է ստանալ տեղեկատվական ամենատարբեր աղբյուրներից, ինտերնետ կայքերից (օր՝ www.rustoys.ru):

Սակայն մենք ձեր ու երեխայի համատեղ գործունեության ընթացքում ինքնաշեն տիկնիկների, ամենատարբեր տիկնիկային թատրոնների և ընդհանրապես բազմազան իրերի ու խաղալիքների ստեղծման կողմնակիցն ենք, որովհետև ոչինչ չի կարող այդ գործունեության ընթացքում ապրած հաճույքին փոխարինել: Ի վերջո, միշտ էլ (մանավանդ այս դեպքում) գործի ընթացքը շատ ավելի հետաքրքիր և ուսանելի է, քան արդյունքը: Իսկ մեզնից յուրաքանչյուրի համար մեր ձեռքով պատրաստած ամենատձև խաղալիքը, իրն առավել հարազատ է, քան գնված ամենագեղեցիկ, շքեղ խաղալիքը. դա լրիվ մերն է, իր հետ անչափ շատ հաճելի հիշողություններ է բերում: Միաժամանակ դա երեխային մեծ ինքնավստահություն է տալիս. ինչքա՜ն բան կարող է անել ու դրա-նով շատերին հիացնել: Այս դեպքում երբեմն մանկավարժական, հոգեբանական ու սոցիալական այնպիսի խնդիրներ են լուծվում, որոնց մասին անգամ չեք մտածել:

Մի բան էլ, որ պակաս կարևոր չէ. այս գործում պիտանի է գրեթե այն ամենը, ինչ կա ձեռքի տակ կամ կարող էր վաղուց աղբի մեջ լինել: Մի փոքր միտք ու երևակայություն, և մենք դրանցից կպատրաստենք, օրինակ՝

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 7. Ստվարաթղթից տիկնիկներ

Նախապատրաստումը

Ձեզ անհրաժեշտ են՝

ստվարաթուղթ,
ջրաներկ (կամ գուաշ, նշագրիչներ, գունավոր մատիտներ),
մկրատ,
ռետին կամ ռետինանման նյութի կտորներ:

Ընթացքը

1. Թող երեխան ձեր ընտրած կամ հորինած ստեղծագործության հերոսներին միջավայրի համար անհրաժեշտ իրերն ու պարագաները նկարի կամ ուրվագծի:

2. Եթե դրանք A4 չափի թղթի վրա են, ապա ստվարաթղթի վրա առանձին-առանձին փակցրեք և շրջագծով կտրատեք (իհարկե կարելի է ուղղակի ստվարաթղթի վրա նկարել):

3. Ռետինի կտորների վրա ճեղք բացեք (դա մենակ անելը երեխայի համար վտանգավոր է) և յուրաքանչյուր նկարն առանձին ամրացրեք ճեղքի մեջ՝ սեղանին կանգնելու և տեղաշարժվելու համար:

Հուշում

Եթե դժվարանում եք նկարել, կարող եք հնացած մանկական ամսագրերի և այլ տպագիր նյութերի նկարները, նկարների տարբեր հավաքածուներ օգտագործել:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 8. Խմորից տիկնիկներ

Նախապատրաստումը

Ձեզ անհրաժեշտ են՝

ալյուր, աղ

սոսինձ (էմուլսիա),

ջրաներկ (կամ գուաշ, նշագրիչներ, գունավոր մատիտներ):

Ընթացքը

1. 200 գ ալյուրը 40 գ էմուլսիայի և 30 գ աղի հետ շաղախեք (պինդ խմոր է ստացվում):

2. Խմորն այնպիսի գնդերի բաժանեք, որ երեխան կարողանա դրանք որոշ ժամանակ մատների վրա պահել:

3. Ձեզ անհրաժեշտ կերպարները խմորի գնդերից այնպես պատրաստեք, որ դրանք հնարավոր լինի մատնոցի նման մատներին հագցնել:

4. Թողեք, որ դրանք մի լավ չորանան:

5. Այնուհետև գունավորեք, և տիկնիկները «բնավորություն» ձեռք կբերեն:

Հուշում

Վերը նշված խմորը կարելի է սառնարանում մոմլաթի մեջ պահել և երկար ժամանակ օգտագործել: Այն կարող է բոլոր ասպարեզներում պլաստիլինին փոխարինել, սակայն մի առավելություն ունի. խմորը կարելի է կա՛մ նախապես գունավորել (էմուլսիային գույն տալով), կա՛մ էլ պատրաստված իրերը չորանալուց հետո ներկել:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 9. Ձեռնոցով տիկնիկներ

Նախապատրաստումը

Ձեզ անհրաժեշտ են՝

մեկմատնանի կամ հնգամատ ձեռնոցներ (թեկուզ հնամաշ, չօգտագործվող),

գործվածքների, կաշվի կտորտանք,

կոճակներ, ուլունքներ, տարբեր նյութերից գնդիկներ, խորանարդիկներ և այլն,

վերը նկարագրված սոսնձով խմոր:

Ընթացքը

1. Նախորդ առաջադրանքում նկարագրված ձևով կերպարների գլխիկները պատրաստեք:

2. Ձեռնոցի վրա կարեք, սոսնձեք կամ տեղադրեք

տիկնիկի մարմնի, հագուստի մասերը:

Հուշում

Ձեռնոցներին կարող են փոխարինել երեխայի ձեռքը մինչև արմունկը ծածկող տոպրակները, որոնք երեխան ինքը կարող է կարել:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 10. Հագուստի կախիչներով «խամաճիկներ»

Նախապատրաստումը

Ձեզ անհրաժեշտ են՝

հագուստի ամենասովորական ուսավոր կախիչներ,
ստվարաթուղթ,
գործվածքների, կաշվի կտորտանք,
կոճակներ, ուլունքներ և տարբեր նյութերից գնդիկներ, խորանարդիկներ և այլն,
հաստ թել կամ պարան:



Ընթացքը

1. Նախորդ առաջադրանքներում նկարագրված ձևով կերպարների գլխիկները պատրաստեք կամ էլ ստվարաթղթի վրա, տիկնիկի դեմքը նկարեք, կախիչի կեռ բռնակին ամրացրեք:

3. Կախիչի վրա տիկնիկի մարմնին հագուստի մասեր կարեք, սոսնձեք կամ տեղադրեք:

Հուշում

Տիկնիկն առավել շարժուն և ճկուն կլինի, եթե ձեռքի ստվարաթղթից պատրաստված դաստակային մասն ու ոտնաթաթերը կախիչին երկար պարանով կամ հաստ թելի միջոցով ամրացնեք (կախվում են):